


659

Lh-45

891. 99

4- 42. 

Ա. ՄԱՐԳԱՐ.

ԵՐԱԽՏԻՔ



Պատմուածք

Բ Ա Վ Ո Ւ

Տպարան Ն. Երևանցեանի

1904

36 FEB 2013

Дозволено Цензурою 26 Ноября 1904 г. Тифлисъ.



19568-58



ԵՐԱՆՍԻՔ

Պատմութեամբ.

(Յուեր իմ ընկեր՝ ուսանող-ըմբիշի Տիգրան Բուղդանեանի)

I

Փառաւոր զիպլամբ ծոցս զրաժ՝ արտասահմանից հայրենիք էի վերադառնում: Ճանապարհին՝ երկաթուղում, թէ շոգենաւի մէջ, ճանապարհորդական ժամերիս անվերջ ծրագրներ էի կազմում ապագայ գործնէութեանս համար: «Ի՞նչ պէտք է անեմ.» այս հարցը ցցուել էր առաջս ինչպէս մի անանցանելի ժայռ, որի զիմաց ուղևորը մտամուրդ կանգ է առնում, անկարող առաջ շարժուելու: «Ի՞նչ պէտք է անեմ.» մի քանի տարի առաջ, երբ նոր էի ուղևորում արտասահման, այդ հարցի պատասխանն ինձ համար շատ պարզ էր. հասարակական գործիչ կը դառնամ, մտածում էի ես. իսկ այժմ, երբ վերադառնում էի ուսումս աւարտած, այդ հարցը անլուծելի խնդիր էր դարձել ուղեղս

կրծելով: Արդեօք գրականութեամբ գրադուեմ: Բայց չէ՞ որ մեր բոլոր գրագէտները բազմաթիւ մեռել. ուսուցչութիւն անել . . . միթէ ուսուցչի կեանքը աւելի նախանձելի է, քան առաջինինը, կամ վերջապէս սր տեղ անել . . . : Մտնել գիւղ, դիւղական շրջանում գործել, բայց ինչ ասպարէզ ընտրել այնտեղ, որ բաւարարութիւն տայ ներքին կոչմանդ: Հետեւել միւսներին, թողնել գիւղն էլ, հասարակական գործնէութիւնն էլ, քաշուել մի անկիւն, ընկնել մասնաւոր երջանկութեան յետեւից, հարստանալ, փառաւոր ապրել. բայց չէ՞ որ այդպիսիներին ատել եմ, զգուանքով եմ մտաբերել մինչև այն րոպէն, երբ դիպումն ստացայ. չէ՞ որ ընկերներիցս մէկը գեռ մի քանի ամիս առաջ նամակով հարցրել էր. «հոսանքի հետ, թէ հոսանքի դէմ. լինելու ես սովորական մարդը-կռուից փախչող, թէ գաղափարի մարդը՝ — կռուի մեջ նետուող:» Եւ ես պատասխանել էի. «այն րոպէին, երբ ես կը գնամ սովորական ճանապարհով, հոսանքի հետ կերթամ՝ անկարող կռուին դիմագրելու, կեանքի վայելքը անձնական երջանկութեան մէջ կը փնտռեմ . . . այն րոպէին թող ինձ խոցոտեն ընկերական նախատինքներիդ սուր սլաքները . . . կեանքը առանց գաղափարի նման է հոգուց զրկուած մարմնին . . .» և յետոյ, շարունակութեան մեջ բուռն նախատինքներ եմ թափում այն բոլորի գլխին, որոնք անգաղափար կեանքով են ապրել, դատապար-

տել եմ նոյն խակ նրանց, որոնք այգալիսի հարց են տալիս . . . : Իսկ այժմ, այժմ ես ինքս նոյն հարցերի դիմաց անկարող եմ որևէ ելք գտնել:

Երկաթուղին կանգ առաւ կայարաններից մէկում. ես ցած իջնելով անբուն աչքերս զովացրի սառն ջրով և երկու բաժակ թէյ խմելուց յետոյ՝ նստեցի նախկին տեղս. գնացրը շարժուեց:

Ես պատրաստուում էի նորից խորասնդունել ինձ տանջող մտածմունքների մէջ, երբ ինձ սթափեցրեց մի առնացի ձայն:

—Ներսիսութիւն պարոն, այստեղ աղմտ է:

—Այո, համեցէք խնդրեմ. ասացի ես:

Տարիքաւոր՝ բայց աշխոյժ շարժումներով մարդ էր իմ նոր ուղեկիցը: Ածելած երեսը զարգարուած էր խոշոր հայկական քթով, որի երկու կողմերում փայլում էին՝ երիտասարդական աշխոյժը կորցրած, բայց կենդանի, ժպտուն աչքերը. երկար վերարկուն, հաստ ձեռնափայտը, նրա պարթև հասակի հետ մի համաչափ երրորդութիւն էին կազմում, ախամայ պատկառանք զարթեցնելով գէմինի մէջ:

Մի տեսակ տխրութեան և ուրախութեան զգացմունքով համակեց ինձ նոր ուղեկիցս. բոպէապէս տխրեցի, որ նա խանդարեց մտածմունքս, բայց և ուրախացայ՝ վերջապէս ազատուելով ինձ սաստիկ ճնշող մտածողութիւնից: Չգիտեմ, այդ բանը նա էլ նկատեց թէ ոչ. միայն իմ գէմուղէմ տեղաւորուե-

լուց յետոյ ասաց:

—Անտանելի է ճանապարհորդութիւնը առանց
ընկերի, մանաւանդ երկաթուղային:

—Այո, վրա բերի ես. ամբողջ օրը մտածմունք-
ների ես անձնատուր լինում:

—Երեսուն տարի շարունակ ճանապարհորդել եմ,
սակայն չեմ կարողանում երկաթուղուն ընտելանալ.
Ճիշտ է, հանգիստ է, բայց շատ ձանձրալի է: Ու-
րիշ բան է կառքով, ձիով, մանաւանդ ստրով ճա-
նապարհորդելը. հանգիստ գիտում ես շորս կոզմդ,
ամեն քայլափոխում մի նոր տեսարան է բացւում
աչքիդ առաջ. կանգ ես առնում, հիանում ես բնու-
թեան գեղեցկութեամբ, զգալով որ նրա ծոցումն
ես ապրում . . . :

—Ներողութիւն, դուք ո՞րտեղացի էք, յանկարծ
խօսքը փոխեց նոր ծանօթս, որ սկսել էր ինձ մի
տեսակ գրաւել, և մինչ ես պատասխանեցի թէ
Ա—եցի եմ, նա ծխախոտը վառելով շարունակեց.

—Երանի ձեզ, երևի հայրենի՞ք էք գնում:

—Այո:

—Որտեղից էք գալիս:

—Գերմանիայից:

—Ուսանո՞ղ էք:

—Նոր եմ աւարտել:

—Աւարտել էք հա՛ն, հիանալի է, հիանալի. երա-
նի ձեզ, գնացէ՛ք, թարմ երիտասարդ, գնացէ՛ք, շրջե-
ցէ՛ք ձեր գաւառը, համեմատեցէ՛ք ձեր տեսած վայ-

րերի հետ և կը տեսնէք թէ ձեր բնութիւնը որքան բարձր, գեղեցիկ է բոլոր տեսածներիցդ, և որքան թշուառ բնութեան զարդը— մարդը ձեր ծննդավայրում, համեմատած այնտեղիսի հետ: Ի՞նչ էք մտադիր անել:

— Գեռ ոչինչ չեմ որոշել:

— Ի՞նչպէս, արդէն աւարտած հայրենիք էք վերադառնում և դեռ չէք որոշել թէ ինչ պէտք է անէք: Երևի կը մնաք ձեր գիւղո՞ւմ— այնտեղ ձեզ համար գործնէութեան փառաւոր ասպարէզ կայ:

— Չէնց ես էլ գրա մասին էի մտածում մինչև ձեզ հանդիպելու, սակայն, ասացէք խնդրեմ, ի՞նչ պէտք է անեմ ես գիւղում. մի՞թէ գիւղը ինձ գործելու ասպարէզ կը տայ. մի՞թէ ես կարող եմ լինել գիւղական ուսուցիչ, բահանայ, բժիշկ, կամ մի ուրիշ բան. չէ որ այդ պաշտօնը կարող է կատարել նաև մի ուրիշ՝ աւելի քիչ պատրաստականութիւն ունեցող մարդ: Երդեօք գաւառը ինձ կը հասկանայ, և վերջապէս ես գաւառին կարո՞ղ եմ որևէ օգուտ տալ. իմ լայն, ընդարձակ ծրագրները մի՞թէ կարող են պարփակուել գիւղական նեղ սահմաններում . . . : *Մ*

— Հա՛, հա՛, հա՛, ընդարձակ, լայն ծրագրները . . . հա՛, հա՛, հա՛, ծրագրները. ընդհատեց ինձ ուղեկիցս, բարձրաձայն ծիծաղելով:

— Այն, պարոնս, սիրելի երիգասարդ պարոնս—

Թոյլ տուէք խնդրեմ անկեղծ, պարզ վերաբերուել
դէպի ձեզ — դուք հրաշալի կերպով կարող էք և
պարտաւոր էք գիւզում մնալ և գործել. գիւզը ձեզ
ասպարէզ կտայ, կընդունէ ձեզ գրկաբաց, միայն
թէ սիրէք նրան: Քաղաքներում ձեզ նման զարգա-
ցած պարտններ շատ կան, բայց ինչ են անում
նրանք. իւրաքանչիւրը պատճառ բռնելով թէ գա-
ւառներում ասպարէզ չըկայ գործելու, վազում է
քաղաք և անձնատուր լինելով ընդհանուր հոսան-
քին՝ մոռանում է գիւզն էլ, քաղաքն էլ: Մի գեր
պաշտօն է ձեռք բերում՝ իւր մասնաւոր գործերով
գրազուած, հասարակութիւնն էլ է մոռանում, հա-
սարակական գործնէութիւնն էլ: Գիւզական շրջանը
նեղ, խորթ համարելով, խորթանում են նաև հա-
սարակութիւնից. քաղաքի մթնոլորտը ուրիշ բան է,
հազարաւորներից միբանի անհատ կարող է միայն
չըվարակուել այդ մթնոլորտում:

-- Բայց պարոն, մարդուս իրենից էլ շատ բան
է կախուած — ուզում էի խօսել, ինձ այդ ան-
հատների թուից դուրս բերելու համար, բայց նա
խօսքս կտրելով շարունակեց իւր ճառը, հետզհետէ
տաքանալով. ես անձնատուր եղած լսում էի նրան:

-- Հարցնում էք, գաւառին կարո՞ղ եմ որևէ օ-
գուտ տալ. կարո՞ղ էք, այն, կարող էք — մե՞ծ, շատ
մեծ օգուտ տալ. վերջին խօսքերը այնպէս ուժգ-
նութեամբ արտասանուեցան, որ ես մի բռայէ ինձ
կարծեցի արիւնահեղ ճակատամարտում յաղթուած

փախստական:

— Գուր շէր հաւատում թէ դաւառին կարող էր
օգուտ բերել. լաւ, դէ լսեցէք . . . : Եւ նա
սկսեց պատմել անընդհատ, առանց կանգ առնելու:

II.

— Խօսերայի տարին էր . . . : Սոսկայի համա-
ճարակը անուելի ծաւալ ստացած այնպիսի աւե-
րածներ էր կատարում, որ մարգիկ յուսահատու-
թիւնից շրգիտէին ինչ անեհ: Մեռնում էին հար-
իւրներով. մեռնում էին յանկարծ— մի քանի բուլէի
մէջ: Ամբողջ ազգաբնակչութիւնը սարսափահար
միայն մի ելք էր գտնում ազատուելու համաճարա-
կից և այդ ելքն էր ազօթքը: Ազօթում էր տգէտ
գիւղացին, ազօթում էր և զիտուն ուսուցիչը. ա-
զօթում էր թշուառ բանուորը, ազօթում էր և
հարստութեան ծովում յզփացած բուրժուան, որ
մինչ այդ՝ շգիտէր ի՞նչ ասել է ազօթք: Ազօթում
էին, բայց բալորն էլ մեռնում էին ազօթքը շր-
թունքներին. կարծես երկիրն էլ էր խլացել. ա-
զօթքն ու անէծքը, ազերսն ու հայհոյանքը
անհետեանք էին մնում . . . :

Այդ ժամանակ ես ապրում էի Ե. քաղաքում,
կնոջս ու միակ որդուս հետ: Յարաբերութիւններս
միանգամայն կտրել էինք դրսի աշխարհի հետ.
տանից դուրս չէինք գնում ոչ ես, և ոչ մանաւանդ

կինս ու որդիս. բակի դուռը միշտ փակուած էր լինում. միայն ամեն առաւօտ, շատ վաղ գնում էի շուկայ, միժերբ առնում և տուն շտապում: Օ՛ֆ, այն ի՞նչ էր, Աստուած իմ. օր չէր լինում, որ չըլսէի թէ այս ինչը, կամ այն ինչը մեռել են, որոնց հետ մի օր առաջ ես խօսել էի, որոնց տեսել էի: Տուն, պատշգամբ, բակ այնպէս մաքուր էինք պահում, որից աւելին երեսակայելն անկարելի է. պատուհաններն անգամ չէինք բաց անում — չնայելով անտանելի շոգին — որ շը լինի թէ փոշու մի հատիկի հետ խօլերան ներս մտնի: Բայց եկաւ, դաժան ախտը եկաւ, փակ դռնից ու պատուհաններից ներս թափանցեց և մի օրուայ մէջ ես զրրկուեցայ սիրելի կնոջիցս: Ախ, անկարելի է, անկարելի. չեմ կարող նկարագրել այն վիշտը, յուսահատութեան այն աստիճանը, որ տիրել էր ինձ: Բայց այդ բաւական չէր վշտաբեկ մարդու դիմաց կունութիւնը փորձելու: Տակաւին մի օր էր անցել այն ժամից, երբ ես վշտի ճիրաններում տառապում էի՝ և ահա, յանկարծ վիճակուեց մոռանալ այդ վիշտը. չէ որ թունաւորուածը թոյնով է բժշկուում. կարծես երկինքը ինձ համար պատրաստել էր մի աւելի սոսկալի վիշտ, փարատելու, մոռացնելու նախկին վիշտս: Այո՛, մի օր, ճիշտ մի օր էր անցել կնոջս թաղումից. և ահա միակ որդիս, միակ մխիթարութիւնս ու յոյսս անկողին ընկաւ . . . : Երիգատարդ էք. դեռ վիշտ, այն էլ ծնողական վիշտ

չէր տեսել, չը գիտէր թէ ինչպիսի կատակ է անում վիշտը իւր թշուառ զոհի հետ: Աշխարհը մթնեւ էր ինձ համար. որդուս իրեն բախտին թողած՝ սենեակի մեջ վազվզում էի այս ու այն կողմ, պատերից էի գլխով խնկրում. որդիս տառապում էր պառկած՝ իսկ ես ոտքի վրա: Նախանձում, երանի էի տալիս նրան. ինչո՞ւ ես չէի պառկած նրա փոխարէն. ինչո՞ւ դաժան ախտը ինձ թողած՝ նրան էր զրկում մատաղ կեանքից. չէ՞ որ ես կեանքը թիշ թէ շատ վայելել էի, չէ՞ որ ես վշտի մրուրը ծծել էի— մահուան էի կարօտ, իսկ նա դեռ մանուկ էր, կեանքի վայելքին էր կարօտ: Այլևս չէի սարսափում խօլերայից, էլ ո՞ւմ պիտի վարակէր. կնո՞ջս. չէ՞ որ նա արդէն գնաց. որդո՞ւս— չէ՞ որ նա արդէն ճանապարհ է ընկնում. ի՞նձ, ո՞հ, որքան երջանիկ կը դգայի ինձ այդ բուպէին, եթէ նրան— որդուս ուղեկցելու բախտ ունենայի դէպի գերեզման: Կարծես գիտմամբ դռներն ու լուսամուտները բացել էի, որ ախտը ներս գայ— եթէ միայն չէր եկել. գայ, ինձ էլ վարակի. . . բայց նա անգուլթ էր, ինձ համար չէր գալիս:

— Հայրիկ, մեռնում եմ, օգնիր . . . :

Ա՛խ, այն ի՞նչ ձայն էր, ցցուեց սրտումս. չէ՞ որ դա ինձ աւելի խայթեց, աւելի տանջեց, քան թէ կարող էր տանջել խօլերան: „Մեռնում եմ, օգնիր“. ասում է. բայց ես ի՞նչ կարող էի անել,

ինչո՞վ կարող էի օգնել. կեանքիս մէջ առաջին անգամ զգացի թէ սրբան խղճուկ արարած է մարդս. մի կեանք, ծաղիկ կեանք, հոգոյդ շափ սիրելի կեանք անհետանում է աչքիդ առաջին և դու անկարող ես նրան օգնել: Արտասուքն էլ էր գութը կորցրել, արտասուք էլ չըկար թէ կրակ սիրտս զովացնէր. և ինձ մի ելք էր մնում միայն ազատուել աննկարագրելի հոգեկան տանջանքներիցս— վերջին մնաս բարևի— հրաժեշտի համբոյրը տալ սիրելի զաւակիս, ու դուրս գնալ, վազել փողոցներով, գուցէ կարելի լինի բռնուել խօլերայից. այդ էր իմ միակ փափազը. և ես մի պինդ համբոյր տալով որդուս մարուող աչքերին, դուրս շտապեցի:

— Խօլեր, խօլեր, գոռում էի ես փողոցէ փողոց վազելով,— ինձ խօլեր է կպել, վարակուել եմ, հեռու գնացէք . . . և երբեմն կանգ էի առնում ըզգալու ցաւը, բայց չըկար: Ախտը ինձ համար խղէալ էր դառել, որի յետևից վազում՝ և չէի կարողանում հասնել:

. . . Հեռու, փողոցի ծայրին, որտեղ քաղաքային հիւանդանոցն էր գտնուում, ահագին բազմութիւն էր խոնուած: — Այնտեղ, դէպի այնտեղ,— մտածեցի ես, բազմութեան մէջ աւելի շուտ կ'վարակուեմ. և վազեցի այն կողմը: Վազեցի խօլերա գտնելու, աներևակայելի բան գտայ . . . :

— Օգնո՞ւմ է:

—Այո՛:

—Ի՞նչպէս կարող է օգնել. խօլերայից բռնուածք մի թէ բժշկուում է:

—Չէ՞ք հաւատում, այ Մարտիրոսին բժշկեց, Ստեփանին ազատեց մահից. ո՞ր մէկն ասեմ. այսօր 10 հոգուց աւելի է բժշկել:

—Լաւ է ինքը շի վարակուում:

—Ասում են թալիսմ ունի մօտը:

Այս խօսքերն էի լսում շարունակ, երբ ակամայ, կարծես մի գերբնական զօրութեան դրդամամբ ինձ գտայ հիւանդանոցի սանդուխներով բարձրանալիս. երկու մարդ առաջս կտրելով հրամայեցին — թէ խնդրեցին, չըզիտեմ—դուրս գնալ. խօլ ես նրանց ձեռքերից ազատուելով ներս ընկայ:

Մի մարդ, ո՛չ, մի էակ—գուցէ երկնային ոգի՝ կանգնած էր առաջս. ինչ որ հրամաններ էր տալիս, որոնց հասկանալու կարողութիւնից զրկուել էի: Հրեշտակի պէս մաքուր, սպիտակ շապիկ էր հագել, որի ծայրերը ծածկում էին ոտքերը քսուելով յատակին. աչքերին ակնոցներ ունէր դրած մազերը երկար՝ սանրուած էին դէպի յետ. ճակատը լայն, որից կարծես արտայտւում էր մի վեհ, կենդանարար լոյս:

—Փրկիչն է, մրմուացի ես. ու մի բոլէ յետոյ ծնկաչոք նրա առաջ էի՝ զլուսս խոնարհած:

—Ո՞վ էք, ի՞նչ էք կամենում, ասաց նա մեզմ ձայնով:

— Խօլեր, գոռացի ես. նա զարմացած ցաւակցա-
կան հայացք ձգելով ինձ վրա, կրկնեց հարցումը:
Այս անգամ նրա ձայնի հնչիւնները այնքան քաղցր
էին, մեղմ, որ բուպէապէս ինձ սթափեցրին իմ
դրուժիւնից. ես զգացի որ մարդ եմ. ցնցուե-
ցայ, մոռացայ թէ ինչու համար եմ եկել. աչքիս
առաջ պատկերացաւ իմ տունը, որի դռները բաց
էի թողել, որի մէջ մահճակալի վրա պառկած
տառապում էր սրբիս մրմնջալով. «հայրիկ, մեռնում
եմ, օգնիր»:

— Ո՛վ Փրկիչ, ճշացի ես, նրա երկու ձեռքերից
բռնելով, ազատեցէք որդուս, եթէ դեռ կենդանի է.
ես մեղաւոր եմ, նրան մենակ թողի. եկէք, եկէք,
բժշկեցէք նրան:

— Հանդարտուեցէք, բարեկամ. ձեր որդին կեն-
դանի է. մի վախէք,

— Ուր է, որ սենեակումն է դռնուս նա:

— Այնտեղ է, մեր տանը. մենակ է, օգնութիւն է
ուզում, օգնութիւն տուող շրկայ. ա՛խ, ես մեղա-
ւոր եմ, ես նրան մենակ թողի . . . :

— Կառք, գառապ այդ մարդը և վաղեց դէպի
ցած, ինձ էլ հետը քաշելով:

Մինչև տուն հասնելս քանի անգամ ես մտքով
զնացի ու յետ դարձայ: Կառքը կանգ առաւ և ես
անծանօթ բժշկի հետ վեր սլացայ. «ա՛խ, մեռած
չլլինի, մի վերջին համբոյր ես տամ, մի անգամ ես
նրա ձայնը լսեմ». այս անցաւ մտքովս, մինչև որ-

դուս ննջարան մտնելը: Մօտեցայ նրան. երեսը բարձի մեջ [Ժաղած, փորի վրա պառկած էր. — Վահան, կանչեցի. պատասխան չեղաւ. աչքերս մ[թնեցին, զլուխս պտոյտ եկաւ և ես վայր ընկայ անզգայ:

Ինչ պատահեց դրանից յետոյ, ռժիշկն ինչպէս ներս եկաւ, ինչ արաւ՝ ոչինչ չիմացայ. միայն երբ աչքերս բացի, ինձ տեսայ մահճակալի վրայ պառկած, իսկ ռժիշկը կանգնած էր կողքիս սրուակը ձեռին, որ շարունակ մօտեցնում էր հոտոտելիքիս:

— Վահան. նորից ձայնեցի ես:

— Հանգիստ եղէք, Վահանը առողջ է, ասաց ռժիշկը հանդարտ ձայնով: Ես վեր կացայ նստեցի և աչքերս յառելով թշկի երեսին — հարցրի:

— Վահանս ուր է:

— Ձեր որդին առողջ է, նա վարակուած չէ խօլերայով. մրսել է, որից փորահարինք է առաջացել, երկու — երեք օրից յետոյ բոյորովին կառողջանայ:

Ուժերս հաւաքելով բոպէսպէս [Ժռայ որդուս անկողնու մօտ:

— Հայրիկ ջան, ինչպէս ես, հօ դու շնս վարակուել, ես առողջանում եմ:

Արտասուքը՝ որին քանի օրից ի վեր փափագում էի, [Թրջեց աչքերս և ես փաթաթուելով հիւանդին՝ հանրուրեցի և ապա յետ նայելով տեսայ թշկին [Թաշկինակով աչքերը սրբելիս:

— Ձեր որդին առողջ է, միամիտ եղէք, վարակուած չէ. ես վազր նորից կայցելեմ. միայն զգոյշ

կացէք, քաղաք շրջնաք:

Լեզուս անգոր գանուեց որև է երախտագի-
տական բառ արտասանելու. զգրոցից հանելով Ծ
հատ տասն ըուրլիանոց [Ժախանձագլին ուղղեցի
գէսլի բժշկիլը:

—Ո՛չ. ես ձրի եմ բժշկում. ասաց նա դուրս
շտապելով, քաղաքային վարչութիւնը ռոճիկ է տա-
լիս: Ամեն հնար գործ դրի, անկարելի եղաւ նրա
գուլթը շարժել.

—Ձեր ազգանունը կուզէի իմանալ, ո՞վ իդէալա-
կան մարդ:

—Բժիշկ Սամսոն Հասարակեան, պատասխանեց
նա մի տարօրինակ հայեացք ձգելով ինձ վրա, և
նայելով ուղիղ աչքերիս՝

—Իսկ ձե՛րը — հարցրեց:

—Տիգրան Բարախեան:

—Պաւառական իրաւաբան:

—Եյո՛:

—Եյո, գաւառական իրաւաբան Տիգրան Բա-
րախեան. իմ բարեկամ, իմ բարերար, իմ կարօտի
առարկայ. որքան ժամանակ է ուզում էի ձեզ
տեսնել. փնտռում էի, հարցնում և ոչ մի կերպ չէի
կարողանում իմանալ ձեր տեղը: Թոյլ տուէք,
[Ժո՛յ], [Ժօթուել ձեր ձեռքը, համբուրել ձեր ձեռ-
քը . . . — և նա առանց ուշադրութիւն դարձնելու
իմ ընդգլխագրութեանը սկսեց տաք տաք համբուր-
ներ տեղալ ձեռքերիս վրա:

Ես քարացած՝ չեմ հասկանում թէ ինչ է կատարում շուրջս. այս բոլորը երազ է թւում—ցնորուած ուղեղիս վերարտադրած պատկերներից մէկն է կարծես. աչքերս լայն բանալով՝ ձեռքերս խլեցի նրանից և համարեա թէ ճշալով ասացի:

—Յն. ն. ն.յց նե...եբողմութիւն պարոն. մենք առաջին անգամն ենք հանդիպում միմեանց. այո՛, ես ձեր բարեկամն եմ այսօրուանից, բայց դո՛ւք էք իմ բարերարը, որդուս բարերարը . . . : Ես եկայ մահ փնտռելու, դուք կեանք տուիք ինձ. որդիս մահուան դուռն էր հասել, դուք ազատեցիք նրան:

—Ես պարտաւոր էի, պարտքս վճարեցի. իսկ դուք, պարոն Տիգրան Բարախեան—անխ, սրբան քաղցր է այդ ազգանունը ինձ համար, ամբողջ տանկէսինդ տարի կրկնում եմ ու շեմ ձանձրանում—այո՛, պարոն Տիգրան Բարախեան, ես վճարեցի միայն պարտքիս ամենաշնչին մասը. իսկ դո՛ւք՝ դուք տուիք ինձ ձեր ունեցածից, դուք նուիրեցիք:

—Լուծեցէք այս հանելուկը, պարզ չէ, մութն է. լուծեցէք, հասպա թէ ոչ ես կը ցնորուեմ. այդ ի՞նչ պարտքի մասին է ձեր խօսքը:

—Ան, չէք յիշում, այս բոլորիս կը պատմեմ:

Մենք նստեցինք միմեանց դէմ ու դէմ, որդուս մահճակալի մօտ, և իմ նոր բարեկամ բժիշկը պատմեց հետեւալը —

—Սակայն դուցէ ձեզ



85-89561

կարծ խօսքը կտրելով ասաց ուզեկիցս, որի ճակատի ակոսներում սկսել էի կարգալ բազմաթիւ արկածների հետքեր:

—Ո՛չ, ո՛չ, խնդրում եմ շարունակեցէք, ասացի ես ծխախոտ առաջարկելով պատկառելի ուզեկցիս, որը երկաթուղային ճնշող, երկարատե ժամերս բուպէի պէս արագ սլացրեց:

—Հա, մենք նստեցինք միմեանց դէմ ու դէմ և անծանօթ բժիշկը պատմեց հետեւալը:

III.

„Չքնաղ է չէ, Ա. գատաւր. քաղցր յիշողութիւնների հետքեր է թողել ձեր մէջ, այնպէս չէ: Բնութիւնը գեղեցիկ է ամեն տեղ և ամեն քայլափոխում ճանապարհորդի առաջ նորանոր սքանչելիքներ է ծառայում: Այնտեղ տարածուած են բարձրաբերձ լեռներ, սրանցից շատերը շարունակ կապոյտ երկնքի հետ են զրուցում իրանց սպիտակ կատարներով, շատերն էլ կարծես խալնելով մերկութիւնից, գազաթներին ծառազարդ քօղ են փաթաթել. և այս ձիւնապատ, թէ անտառապատ լեռներից փոքրիկ վտակները հրգելով ու կարկաչելով ցած են շտապում դէպի մօտակայ հովիտները՝ նիւթ մատակարարելու գետակներին, որոնք միանալով կազմում են Կ. հոկայական գետը: Չեւր ձեռքի տուած, միմեանց յետևից շա-

րան-շարան այդ լեռները տեղ տեղ կազմում են
երկար շղթաներ, բաժանելով ամբողջ գաւառը
մի քանի գաւառակների: Լեռների մէջ ընկնում են
բնդարձակ հովիտներ, լայն գաշտեր, նեղ ու խոր
ձորեր, որոնց մէջ քշքշում են բազմաթիւ վտակներ
ու առուակներ, իրենց մեզմ կարկաշով խանդարե-
լով անգնդային լուսթիւնը: Բնութիւնը գեղեցիկ է
Ա. գաւառի, հողը բերրի, ջուրը առատ, օգր կազ-
դուրիչ: Մի օր այդ գաւառն էլ հեծում էր բռնա-
կալի խեղդիչ ճիրաններում, բայց եկաւ ժամանակ,
երբ վիճակուեց նրան ազատ շունչ բաշել: Ազատ
լեռների, ազատ հովիտների ստրուկ բնակիչներին
վիճակուեց թօթափել բռնակալի լուծը և նրանք
սկսեցին ազատ ապրել ու ազատ շնչել: Բայց այդ
ազատութիւնը կարծես թէ խաբուսիկ էր. այն
վարդագոյն յոյսերը, որ ունէին մարդիկ, մի-
բաժի նման չբացան, անհետացան. որովհետեւ նո-
քա զգացին որ իրենք նորից կաշկանդուած են. և
այս անգամ աւելի՛ զօրեղ թշնամիներից: Գիւղա-
կան տղրուկներն ու գաւառական սրբազգիտներն
էին այս անգամ, որ սկսեցին ժողովրդի արիւնը
ծծել: Եւ Ա. գաւառի շքնաղ բնութեան անբախտ
գաւակները նորից զգացին իրանց բեռնաւորուած:
Բայց շտրտնջացին, ուղեցին սովորել, ընտելանալ
այդ դրութեանը: Տգիտութիւնը, ճիւղտներն ու
խարազանը չէին թոյլ տալիս նրանց տրանջալու:
Մի քանի բէկեր ու ազալարների ընտրած գաւառի

ամենալաւ մասերը ապրում էին իրենք անհող, վայելում էին բնութեան պարզկեները և խլում գիւղացուց նորա արին քրտինքով ձեռք բերած օրական սարէնը: Այդ քէկերի մէջ աչքի էր ընկնում ազահութեամբ ու անզթութեամբ մէկը— Ս. անունով: Ո՞վ կարող էր նրա հասցէին որևէ անվայել բան առել. բոլորը պարտաւոր էին աշխատել նրա համար, տալ նրան իրենց արդիւնքի մեծագոյն մասը, և բացի գրանից միշտ շնորհակալութիւն յայտնել, որ նա իրենց պահում, հայրաբար խնամում է: Գիւղացին աշխատում, արին քրտինք էր թափում, զգալով որ այդ հողը իրանը չէ, վաղը եթէ ազայի կամքը տայ՝ իւր ձեռքից կխլեն. գիտէր որ իւր աշխատանքի տէրը ինքը չէր, այլ ազան. և նորա եռանդը թուլանում էր:

Այդ գաւառի Գ. զիւղում ապրում էր բարեբաստիկ վիճակի մէջ Արլայենյ Գետրոսը. բարեբաստիկ էր նրա կեանքը, որովհետև ինքը առողջ էր ու թիր, կի՛նն ու որդիքը աշխատասէր, հողը բաւական էր բոլորին էլ: Նա գոհ էր իւր վիճակից, որովհետև բնութիւնը նրան այնքան էր պարզեղ, որ բաւական էր թէ իրեն և թէ ազային: Նա գոհ էր, որովհետև երբէք չէր պատահել, որ նա որևէ մէկի առաջ կարիք ունենար վիզը ծռել, ողորմութիւն խնդրել:

Գիւղացիք տեսնում էին նրա վիճակը. երանի

էին տալիս, բայց չէին նախանձում կամ տրտընջում. և ինչո՞ւ տրտնջային, չէ՞ որ: գիւղի ամենալաւ մարդն էր Պետրոսը, չէ՞ որ շատ ազքատներ նրա սեղանից էին կշտանում. — Աստուած այդպէս է կամեցել, նրան լաւ վիճակ է շնորհել, փառք իրան — այդպէս էին մտածում գիւղացիք: Եւ նա ապրում էր երջանիկ, երբ մի օր կարիքը նրան էլ այցելութեան եկաւ — և մի՞թէ կայ մարդ աշխարհում, որին այս դաժան հիւրը այցելութիւն չանէ:

Ինչ որ անձանօթ միջատներ լոյս ընկան այդ տարին և փշացրին Ա. գաւառի բոլոր արտերը. ցորենի հասկերը սևացան, հատիկները ոչնչացան, ոչնչացնելով իրանց հետ ամբողջ գաւառի ազգաբնակութեան յոյսերը: Աղօթք, խունկ, Տիրամօր պատկեր — չկարողացան գիւղացու յոյսերը վերականգնել: Եղ, կով, տան իրեղէններ, բոլորը ծախուեցան, բայց էլի գիւղացիք տանջւում էին սովից:

Եւ ահա ասպարէզ եկաւ նրանց բարերարը, իւր լիք ամբարները բանալով ամբողջ գաւառի համար: Բոլորը նրան էին դիմում, նրանից օգնութիւն խնդրում, և նա տալիս էր, փոխարէնն ստանալով մէկից արջառ, միւսից գոմէշ, երրորդից ձի . . . :

Զատ մտածեց Աբլայենց Պետրոսը, բայց ոչ մի հնար չըզտաւ. սովսը չէր ողորմութիւն խընդրելու, չէր կարող զրկուել իւր աչքի լոյս եղներից.

բայց ընտանիքը, ահագին ընտանիքը նրանից հաց էր պահանջում: Երկար ժամանակ մտածեց Պետրոսը, շատ տատանուեց, վերջ ի վերջոյ վճռեց հետևել համագիւղացիներին— դիմել աղայի գլխութեանը:

Վաղուց էր Ս. ազան նախանձում Պետրոսի դրութեանը, վաղուց էր մտածում նրան գցել իւր ծուղակը, բայց վերջինս շատ հեռու էր պահում իրան նրա որոգայթներէից: Այժմ բախտը հալածական Պետրոսին բերել էր աղայի դուռը, և Ս. ազան կեղծ ժպիտը բերանին ամբարի դռները բաց արաւ: Նա ցորենը գիւղացիներին տալիս էր մէկը երեքով, այսինքն մի փթի փոխարէն հետևեալ տարին պիտի ստանար երեք փութ. բայց այդ պայմանով չհամաձայնուեց տալ Պետրոսին. նա բոլորից յետոյ էր դիմել աղայի գլխութեանը, սովը սաստկացել էր, պայմանները փոխուել էին: Ըմեն մի փթի փոխարէն նա պահանջում էր մէկ օրավար հող: Ծանր էր պայմանը, բայց ծանր էր և Պետրոսի դրութիւնը, և նա պարտամուրհակի տակ մատով նշան դրեց— ստորագրեց, որով զրկոււմ էր երկու մեծ արտից: Սովը սաստկանում էր, իսկ ցորենը վերջացաւ. նորից խնդիր, աղաչանք, նորից բարերարութիւն. և այս անգամ Պետրոսը պարտաւորոււմ էր երրորդ արտի հետ տալ 3 եզ և 10 տարեկան որդուն աղայի մօտ ձրի նորար— մի տարի ժամանակով: Հատ խնդրեց

Պետրոսը իրան վերցնել նորար. բայց ազան չբհամաձայնուեց, նրա գութը շափ ու սահման շունէր, խզնաց Պետրոսի հասակին . . . :

Անցել էր երեք տարին: Անցան վատ օրերը և սև գիշերից յետոյ Ա. գաւառի համար բացուեց պայծառ օր: Տարին այնքան առատաբեր էր, որ գիւղացիները կարող էին և իրենց պարտքերը տալ և ապրուստը հոգալ. բայց պարտքերը ծնել, աճել, բազմացել էին: Գիւղացիք անկարող եղան ամբողջ պարտքը վճարել, ուստի կէսը թողին հետևեալ տարուան:

Խեղճ Աբլայնց Պետրոսը նորից մնաց քաղցած. զրկուած էր արտերից, եզներից. տան բոլոր իրերը ծախեց, բայց չըկարողացաւ ազատուել պարտքից: Որպէն՝ երբորդ տարին էր արդէն ծառայում էր աղայի մօտ անվարձ և ազան ասում էր թէ գեռ շատ պիտի ծառայէ, մուրհակի մէջ այդպէս է գրուած եղի, Պետրոսը սխալում է: Խեղճը երկար շապրեց. վիշտը նրան գերեզման տարաւ և նրա կնոջը ոչինչ չէր մնում անել, եթէ ոչ հինգ փոքրիկ երեխաների ձեռքից բռնած՝ դռնէ դուռն ընկնել, հաց մուրալ, գաւակներին կերակրել:

Հիանալի է Ա. գաւառի ամառը. հիանալի էր մանաւանդ այդ տարին: Չատ շատերին է գերում Ա. գաւառի ամառը, շատերն են հրճուում նրա գեղեցկութեամբ: Այդ ամառը շատերի թւում վի-

ճակուհեց մի երիտասարդը վայելել ընուլթեան պարգևը: Այդ երիտասարդը ուսումը նոր աւարտելով եկել էր գաւառները շրջելու: Առաջին վայրը, ուր նա եկաւ, Ադա Ս-ի կալուածքն էր: Գիւղական ապարանք . . . ընուլթեան ծոցում, մի անտառախիտ լերան կողին շինուած էր եռյարկանի պալատը, որի առաջ տարածուած էր փոքրիկ՝ համեղ ձկներով լի լճակը, իսկ այնտեղ գէմուդէմ— լճի այն կողմը փռուած էին արգաւանդ հողեր, որոնց վրա ծփում էին արտերն ու արօտները:

Ո՞վ էր այդ նորեկը, ոչ ոք չը գիտէր. բայց ինչ որ շուկ տարածուեց գիւղացիների մէջ, ամեն կողմից սկսեցին փսփսալ թէ եկողը ատուակատ է, լաւ տղայ է, Աստուած է հասցրել իրանց օգնական. և հէնց որ երիտասարդը աղայի ձիերից մէկի վրա նստելով դուրս էր գալիս շրջելու նրա ընկարձակ կալուածները, ամեն կողմից քարի թէ թփի տակից, ծառի թէ պատերի յետից նրա ականջին տրտունջի ձայներ էին դիպչում. և թագստի տեղից յանկարծ նրա առաջն էր ցցւում գռեհիկ— շինականը իւր շատախօս խնդիրներով:

—Ադա, գլխիդ մեռնեմ, մի ճար արա, էդ անիրաւի ձեռին վառուած ենք. մի քանի կոտցորեն վերցրինք, երկու տարի է, տալիս ենք, չենք ազատուում:

—Ադա, ի սէր Աստծու, եղներս մի հնարով ազատիր էդ անիրաւի ձեռից:

—Աղա ջան, Աստծու խաթեր, դարդերս անշափ
հն . . . երեք կով ունէի, երեքն էլ տարաւ
անասաւծը:

Գանգատներ, անվերջ գանգատներ . . . նա
լսում էր և «լաւ», ասելով մտրակում ձիուն:

Մի անգամ էլ Պետրոսի տղին վիճակուեց
ուզիկցել «նորեկ աղային» — ինչպէս անուանում
էին գիւղացիները:

—Աղա ջան, հապա ինչո՞ւ ես դու էդքան լաւ
մարդ, մեր աղէն . . . Աստուած հեռու տանի,
հէշ մարդու հետ քաղցր չի խօսայ:

—Ինչո՞ւ . . .

—Ես ինչ իմանամ. լայեալ չի անում. դուք ո՞վ
էք, ասում է. դուք էլ մարդ էք, որ ձեզ հետ
մարդ խօսի. դուք ճիճու էք: Տեսնո՞ւմ ես աղա,
ինչպէս բոլորը գանգատում են նրանից:

—Հապա ինչո՞ւ ես դու նրա մօտ ծառայում,
եթէ վատ մարդ է:

—Էհ, աղա ջան, կարծում ես թէ իմ կամքո՞վ
եմ ծառայում. ես նրա ձեռին գերի եմ:—Եւ նա
պատմեց թէ ինչպէս իրան վերցրել էր մի տարի
ժամանակով, թէ հայրը ի՞նչ թշուառութեան մէջ
էր ընկել և վերջը գերեզման մտել: Վերջը աւելա-
ցրեց նա աչքերը սրբելով կեղտոտ շուխայի
փեշով:

—Գնաց ձեռքերիցս շորս արտը, գնացին բոլոր
մալերը, գնաց ձեռքերիցս տունը և այսօր մայրս

ողորմութիւն է հաւարում. իսկ ինձ վիճակուած է
յաւիտեան ծառայել աղային. ամեն օր ծեծ ու
մուր ուտել. բայց ի սէր Աստու, վարժապետ
ջան, աղային ոչինչ չստես, եթէ ոչ օրս միան-
գամից կը խաւարի:

Ա. գաւառի գեղածիժաղ բնութիւնը իւր բոլոր
չարիքներով ու թշուառութիւններով ցցուեց նո-
րեկի աչքի առաջ և նա մտածմունքի մէջ ընկաւ:

— Լաւ, ասաց նա. քանի՞ տարի է, ծա-
ռայում ես:

— Երեք:

— Կարգալ գիտես:

— Ո՛չ:

— Եթէ սովորեցնող լինի կըսովորես:

— Ո՛վ է ինձ այդպիսի բախտ տուել. կարգալը
մեր ինչ բանն է. ազաների տղերքը կը կարգան,
մէկ էլ ձեզ նման վարժապետները. գիրքը մեզք է
որ մենք առնենք ձեռքներս, մենք պիտի յաւի-
տեան տանջուենք, շարշարուենք և արտասուքով
գերեզման մտնենք վերջը. Աստուած էգպէս
է կարգաղբել:

— Վաղուանից գու կը թողես ծառայութիւնդ
և ինձ հետ կը գնաս շրջելու. ես քեզ գիրք կտամ,
կարգալ կսովորեցնեմ. իսկ այսօր կը գնամ քաղաք
գատաւորների մօտ . . . :

Մի քանի օրից յետոյ ամեն կողմ լուր տա-
րածուց, թէ նոր եկած ազան գատ է բաց արել

մեր ազայի դէմ, թէ նրան սևացնում է լրագրներում. առում է, որ նա վաշխառու է, գիւղացիներին արիւնը ծծում է, բոլորի տունը բանդում է:

Իսկ ազան, փրփրել, կատաղել էր. «դէ, արի ու մարդ պատուիր, հիւր ընդունիր: Եկաւ, Յ ամիս շարունակ ազ ու հաց կերաւ, իսկ հիմա օյիններ է սարբում գլխիս»:

Ի՞նչ եղաւ, ի՞նչպէս եղաւ, չը գիտեմ. միայն մի ամսից յետոյ Արլայենց Պետրոսի կնիկը եկաւ իրենց տուն մի բունն օսկի ձեռին, արտերը յատտացաւ. իսկ նրա տղան ճանտապարհուեց զէպի քաղաք ուսում առնելու . . . :

Այտեղ բժիշկը կանգ առաւ և հոգոց հանեց: Պատմութիւնը ինձ ծանօթ էր, միայն չը խանգարելու համար, թոյլ տուի մինչև վերջ պատմել . . . :

«Քնաց ուսում առնելու, շարունակեց բժիշկը, իմացաւ աշխարհի ցաւը, տեսաւ, զգաց թէ ով էր հանել իրան խաւարի ու բռնութեան ճանկերից. ուզեց բարեբարին տեսնել, շիմացաւ թէ նա որտեղ է. շատ փնտռեց և վերջ ի վերջոյ նրան գտաւ. ահա նա . . . : Խեղճ Արլայենց Պետրոսի տղաս դարձայ երեւելի բժիշկ և այդ բոլորը շնորհիւ ժողովրդի բարեկամ, հայրենասինամ իրաւաբան, նրա իրաւունքների պաշտպան Տիգրան Բաբախեանի. թո՛յլ տուէք համբուրել ձեզ. այժմ հս երջանիկ եմ. շնորհակալ եմ, շնորհակալ եմ ձեզանից. եթէ դուք չը լինէիք, այսօր փոխանակ մի պատուաւոր

բժշկի, ո՛վ վատէ, գուցէ կեդտոտ լաթերի մէջ մի
թշուառական ստրուկ լինէի . . . :

Նայիր գուրը. համաճարակ է այնտեղ. բոլորը
աչքերն ինձ են յառած, բոլորն ինձանից են ապա-
ւէն հայցում, բոլորն իմ ճակատին փրկութիւն են
կարգում, յոգնած ձեռքերն ինձ են կարկառում,
վշտաբեկ հայեացքները շրթունքներիս ուզգած՝
փրկութեան կամ մահուան վճռի են սպասում: Ես
ժողովրդի, խեղճ տառապեալ ժողովրդի՝ տառա-
պած, բայց երջանիկ զաւակն եմ. ես նրա հայրն
եմ, նրա մխիթարիչը, նրա ցաւերի սփոփողը, վէր-
քերին սպեղանի դնողը, իսկ այսօր նրա Աստուա-
ծն եմ և այդ բոլորը շնորհիւ Տիգրան Բա-
բախեանի, որը ճանապարհ ցոյց տուեց, որը հար-
թեց այն ուզին, որ տանում է դէպի լոյս ու եր-
ջանկութիւն: Համբոյր ճակատիդ, ազնիւ մարդ-
ներեցէք, երախտապարտ եմ . . . : Նա թաշկի-
նակը տարաւ աչքերին և բռնելով երկու ձեռքիցս
ամուր սեղմելով ասաց:

— Որդիդ փրկուած է, և դո՛ւ ես փրկել նրան.
ցտեսութիւն, ես շատ ուշացայ, հիւանդները սպա-
սում են . . . “ : Ու գուրս գնաց:

Ես գարմանքից, օրուայ միմեանց յաջորդող
դէպքերից ապշած՝ և ոչ մի բառ չը կարողացայ
արտասանել: Կարծես անուրջների աշխարհումն էի.
որդուս ձայնը ինձ սթափեցրեց:

— Հայրիկ, դա բժիշկ հասարակիւմնն էր, որի

մասին այնքան գրում էին լրագրներում . . . :



—Տեսնում էք, սիրելի պարոնս, ասաց Բարախեանը ծխախոտը վառելով՝ իւր պատմութիւնն աւարտելուց յետոյ: Չատերը (և նոյն իսկ բոլորը), մեր երիտասարդներից կարծում են թէ զաւառում ասպարէզ չը կայ գործելու: Գիւզը կայ իւր պարզ ու մաքուր օգով, իւր վճիտ ու յստակ առուակով. զիւզացին դեռ մնում է տղիտութեան խաւարի մէջ. դեռ նա գերի է տղուկ աղաների և բէկերի ձեռքին. նրան հարկաւոր է լո՛յս, գիտութեան լոյս տալ, առաջնորդել դէպի մարգավայել ապագան:

Մի ասէք թէ ոչինչ չէք կարող անել. մեր նշանաւոր գործիչներից մէկն ասում է „թող ձեզանից իւրաքանչիւրը գո՛հ լինի նրանով, որ իւր կեանքում գոնէ մէկին այր ու բեն է սովորեցրել“. թողէք լայն, ընդարձակ ծրագրները. աւելի լաւ է փոքր գործ կատարել, բան թէ մեծ ծրագրների յետից ընկած՝ օգային ամբողջներ կառուցանել ու ոչինչ չը շինել—:

Հարցը վճռուած էր. գիպլոմս ի գուր չէի ստացել. լայն, ընդարձակ ասպարէզը հրեւում էր առաջիս, որ մինչ այդ՝ ծածկուած էր թանձր քօզով: Եւ ես երկաթուղուց իջնելիս հրածեչ-

տի ողջոյն տուի յարգելի ուղեկցիս՝ երախ
տապարտ սրտով սեղմնելով նրա ձեռքը: Նա
այլևս իմ աչքին մեծ մարդ էր:

Այդ օրից երգուեցի ինձ նուիրել գաւա-
ռին— հասարակական գործնէութեան:

Նա՛ բժշկի երախտաւորը այդ օրուանից
դարձաւ նաև ինձ երախտաւոր:



